ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 7

2013 թվականի հոկտեմբերի 23-ին

ՀՀ դատավորների միության խորհրդը (այսուհետ՝ Խորհուրդ)

Մասնակցությամբ՝ Հրաչիկ Սարգսյան
Դավիթ Ավետիսյան
Տիգրան Սահակյան
Արսեն Մկրտչյան
Հովսեփ Բեդևյան
Ելենա Սողոմոնյան
Գոռ Հակոբյան
Կարինե Ղազարյան
Սուրեն Մնոյան
Էդվարդ Մանուկյան
Վարդան Ստեփանյան
Գագիկ Հովհաննիսյան
Ռուզաննա Հակոբյան
Մարգարիտա Հարթենյան
Գարիկ Ավագյան

քննարկելով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2013 թվականի հոկտեմբերի 21-24-ի նիստերի օրակարգում ընդգրկված «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի[1] և «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի[2] նախագծերը,

ղեկավարվելով Եվրոպայի խորհրդի կողմից 1998 թվականին ընդունված «Դատավորների կարգավիճակի մասին» խարտիայի 1.7-րդ կետով և ՄԱԿ-ի Գլխավոր

[1] http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=6293&Reading=0
[2] http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=6307&Reading=0

ասամբլեայի կողմից 29.11.1985 թվականին հավանության արժանացած Դատական մարմինների անկախությանը վերաբերող հիմնարար սկզբունքների 9-րդ կետով[3]՝

Խորհուրդը.

ՈՐՈՇԵՑ

Նախագծերի վերաբերյալ ներկայացնել հետևյալ առաջարկությունները.

1. «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մասով.

<u>Հիմնավորում.</u>

ՀՀ դատական օրենսգրքի 75-րդ հոդվածի համաձայն. «Դատավորի աշխատավարձը բաղկացած է պաշտոնային դրույքաչափից և դրա նկատմամբ սահմանվող հավելավճարներից»:

Նույն հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի համաձայն. «Յուրաքանչյուր դատավորի վճարվում է հավելավճար՝ դատավորի պաշտոնում աշխատանքային ստաժի համար. առաջին 5 տարիների համար՝ յուրաքանչյուր տարի **2-ական տոկոսի (ընդամենը 10 տոկոս)**, իսկ **6-րդ և դրան հաջորդող յուրաքանչյուր տարվա համար՝ 5-ական տոկոսի չափով**»:

Նախագծի 13-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն. «Դատավորի պաշտոնում աշխատանքային ստաժի համար դատավորին վճարվում է հավելավճար՝ *յուրաքանչյուր տարվա համար երկու տոկոսի չափով*»: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Դատավորներին վճարվող հավելավճարի ընդհանուր չափը չի կարող գերազանցել սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված չափը»:

Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց լրացուցիչ աշխատավարձը չի կարող գերազանցել հիմնական աշխատավարձի 30 տոկոսը»:

---

[3] Դատավորներն ունեն միություններ կամ այլ կազմակերպություններ կազմավորելու և դրանց անդամակցելու ազատություն՝ իրենց շահերի պաշտպանության, մասնագիտական պատրաստվածության կատարելագործման և իրենց դատավարական անկախության պահպանման համար:

ՀՀ դատական օրենսգրքի 75-րդ հոդվածի 3-րդ մասում նախատեսված է երաշխավորող նորմ, որի համաձայն. **«Դատավորի աշխատավարձը և դրա նկատմամբ սահմանված հավելավճարները չեն կարող պակասեցվել նրա պաշտոնավարման ընթացքում**: Սույն կանոնը չի սահմանափակում սույն օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին և 165-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված աշխատավարձի ժամանակավոր նվազեցման հնարավորությունը»:

Գործող կարգավորման և առաջարկվող կարգավորման համեմատությունից հետևում է, որ առաջարկվող կարգավորումը հավելավճարների մասով հանդիսանում է գործող կարգավորման նկատմամբ վատթարացնող:

Այսպես՝ առաջարկվող կարգավորմամբ հավելավճարի չափը սահմանվում է յուրաքանչյուր տարի 2 տոկոսի չափով, իսկ դրա առավելագույն սահմանը նախատեսված է դատավորի հիմնական աշխատավարձի 30 տոկոսը: Այսինքն՝ ըստ առաջարկվող տարբերակի դատավորների հավելավճարը սահմանվում է առավելագույնը **15 տարի ժամկետով՝ յուրաքանչյուր տարի 2 տոկոսի չափով**: Մինչդեռ գործող կարգավորմամբ դատավորների հավելավճար ստանալու իրավունքը նախ որևէ **ժամկետային սահմանափակմամբ պայմանավորված չէ, ավելին՝ 2 տոկոս սահմանված է միայն առաջին 5 տարիների համար, իսկ 6-րդ և դրան հաջորդող յուրաքանչյուր տարվա համար սահմանված է 5-ական տոկոսի չափով հավելավճար ստանալու իրավունք:**

Կարգավորման վատթարացնող բնույթն առավել ակնհայտ է դառնում այն հանգամանքի հաշվառմամբ, որ այս պահի դրությամբ ՀՀ-ում պաշտոնավարող դատավորներից 27 դատավոր ունի 6-10 տարվա աշխատանքային ստաժ, 68 դատավոր՝ 11-15 տարվա, իսկ 61 դատավոր՝ 16-ից բարձր աշխատանքային ստաժ: Նշված դատավորների յուրաքանչյուր տարվա համար 5 տոկոս հավելավճար ստանալու իրավունքը ծագել է և այդ հավելավճարներն իր պաշտոնավարման ընթացքում չփոփոխելու նորմ-երաշխիքի ուժով (ՀՀ դատական օրենսգիրք, հոդված 75, մաս 3) նրանք գտնվում են Օրենսդրի կողմից հստակ կանխորոշված ՈՐՈՇԱԿԻ իրավական վիճակում: Հետևաբար Նախագծով նախատեսված սահմանափակումներն ուղակիորեն նրանց իրավական վիճակը վատթարացնող նորմեր են:

Նախագծի 2-րդ մասի համաձայն. «Դատավորը դասային աստիճանի համար ստանում է հավելավճար՝ սույն օրենքի 32-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված դեպքում»:

32-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն. «Դասային աստիճանի համար սույն օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հավելավճարը դատավորին տրվում է այն դեպքում, երբ նրա պաշտոնային դրույքաչափը հաշվարկվում է սույն օրենքով սահմանված վարձատրության նոր համակարգին համապատասխան»:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն. «Սույն **օրենքն ուժի մեջ մտնելու պահից** պետական պաշտոն զբաղեցնող անձանց **հիմնական աշխատավարձի աճը կասեցվում է՝** մինչեւ տվյալ պաշտոնում նրա գործող պաշտոնային դրույքաչափին հավասար պաշտոնային դրույքաչափ ստանալու իրավունքի ձեռքբերումը, եթե սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին պետական պաշտոն զբաղեցնող անձի հիմնական աշխատավարձը գերազանցում է սույն օրենքով սահմանված չափերը»: Իսկ 6-րդ մասի համաձայն. «Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին պետական պաշտոն զբաղեցնող անձանց լրացուցիչ աշխատավարձը հիմնական աշխատավարձի 30 տոկոսը գերազանցելու դեպքում, լրացուցիչ աշխատավարձի աճը կասեցվում է: Սույն մասով սահմանված դեպքում լրացուցիչ աշխատավարձը կարող է աճել միայն տվյալ պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափի ավելացման դեպքում՝ հիմնական աշխատավարձի 30 տոկոսը չգերազանցելու պայմանով: (...)»:

Նշված կարգավորումներից հետևում է, որ նախագծով նախատեսվում է հավելավճարների հաշվարկման կարգի և չափերի մասով հետադարձ ուժ տալ դատավորների կարգավիճակը վատթարացնող օրենքի, ինչն ուղղակիորեն և իմպերատիվ ձևով արգելված է ՀՀ Սահմանադրությամբ:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտեր հետադարձ ուժ չունեն»:

Նշված նորմը համընդհանուր նորմ է, որն ամրագրում է իրավական ակտերի ժամանակի մեջ գործողության սկզբունքներից մեկը: Այդ նորմն ունի անմիջական, ուղղակի գործողություն. եթե ճյուղային օրենսդրությունը չի նախատեսում համապատասխան նորմ,

որը սահմանում է տվյալ օրենսդրության ժամանակի մեջ գործողության կանոնները կամ բովանդակում է նշված սահմանադրական նորմին հակասող նորմեր, ապա կիրառվում է նշված սահմանադրական նորմն իր անմիջական գործողության ուժով:

Սահմանադրական այս նորմն ուղղված է ինչպես իրավակիրառողին, այնպես էլ Օրենսդրին: Վերջինիս համար այս սահմանադրական դրույթի պահանջը գործում է այն ժամանակ, երբ օրենսդիրը սահմանում է այս կամ այն օրենքի ուժի մեջ մտնելու վերաբերյալ նորմ:

Անձի իրավական վիճակը վատթարացնող իրավական ակտերի հետադարձ ուժն արգելող սահմանադրական դրույթն ունի իմպերատիվ բնույթ. այն որևէ մարմնի հայեցողական լիազորություն չի վերապահում:

Դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը, մասնավորապես, բացահայտված է ՀՀ սահմանադրական դատարանի 2008թ. հունվարի 15-ի ՍԴՈ-723 որոշման մեջ: Սահմանադրական դատարանը, այդ որոշման մեջ անդրադառնալով ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված դրույթի սահմանադրաիրավական բովանդակությանը, նշել է. «Վերջինս հանդիսանում է պետական իշխանության նկատմամբ վստահության և իրավական պետության սկզբունքների կարևոր բաղադրատարրերից մեկը: Այդ սկզբունքը միաժամանակ հանդես է գալիս որպես իրավական որոշակիության սկզբունքի ապահովման կարևոր երաշխիք: Օրենքի հետադարձ ուժի մերժման սկզբունքից բխում է այն արգելքը, համաձայն որի անթույլատրելի է այն իրավունքների սահմանափակումը կամ վերացումը, որոնք ամրագրվել են նախկինում գործող նորմերի հիման վրա»:

Վերը նշվածը, ինչպես նաև դատավորների կարգավիճակի առանձնահատկությունը հաշվի առնելով ՀՀ դատական օրենսգրքի 75-րդ հոդվածի 3-րդ մասում նախատեսված է երաշխավորող նորմ, որի համաձայն. **«Դատավորի աշխատավարձը և դրա նկատմամբ սահմանված ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐԸ չեն կարող պակասեցվել նրա պաշտոնավարման ընթացքում**: Սույն կանոնը չի սահմանափակում սույն օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին և 165-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված աշխատավարձի ժամանակավոր նվազեցման հնարավորությունը»:

Նշվածն առավել ակնհայտ է դարձնում այն, որ նախագիծն օրենք դառնալու դեպքում դրա օրինական ուժի մեջ մտնելու պահին պաշտոնավարող դատավորների նկատմամբ նախագծի քննարկվող կարգավորումները կիրառելը կհանգեցնի նրանց ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ վատթարացնելուն, որն արտահայտվում է **սահմանված** հավելավճարները պաշտոնավարման ընթացքում նվազեցնելու միջոցով: Արդյունքում՝ **ՕՐԵՆՍԴՐԻ** կողմից կխախտվի վատթարացնող օրենքի հետադարձ ուժը բացառելու սահմանադրական պահանջը:

<u>Վերոգրյալի հիման վրա առաջարկում ենք</u>

- Նախագծից հանել հավելավճարների հաշվարկման կարգի և չափի մասով նախատեսված կարգավորումները օրենքի ուժի մեջ մտնելու պահին **<u>պաշտոնավարող դատավորների նկատմամբ</u>** կիրառելի լինելու վերաբերյալ դրույթները (Նախագծի 32-րդ հոդվածի 5-րդ մաս),
- Նախագծի «Անցումային և եզրափակիչ դրույթներ» վերնագրված Գլուխ 11-ում ուղղակիորեն սահմանել, որ օրենքի ուժի մեջ մտնելու պահին 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը չեն տարածվում պաշտոնավարող դատավորների նկատմամբ:

2. Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մասով.

<u>Հիմնավորում.</u>

Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասով առաջարկվում է ՀՀ դատական օրենսգրքի 75-րդ հոդվածի 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

ՀՀ դատական օրենսգրքի 75-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Դատավորի աշխատավարձը և դրա նկատմամբ սահմանված հավելավճարները չեն կարող պակասեցվել նրա պաշտոնավարման ընթացքում: Սույն կանոնը չի սահմանափակում սույն օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին և 165-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված աշխատավարձի ժամանակավոր նվազեցման հնարավորությունը»:

Նորմի բովանդակությունից հետևում է, որ այն նախատեսում է դատավորների աշխատավարձն և հավելավճարներն ի վնաս դատավորների փոփոխելու արգելք, այսինքն՝ հանդիսանում է նորմ-երաշխիք:

Նման նորմ-երաշխիք օրենսդրորեն նախատեսելու պահանջն ամրագրված է մի շարք միջազգային փաստաթղթերում:

Մասնավորապես, **ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 29.11.1985 թվականին հավանության արժանացած Դատական մարմինների անկախությանը վերաբերող հիմնարար սկզբունքների 11-րդ կետի համաձայն**. «[Դատավորների] (…) համապատասխան պարգևատրումը (…) պետք է պատշաճ ձևով երաշխավորվի օրենքով»:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2010 թվականի Դատավորների անկախության, արդյունավետության և պարտականությունների մասին թիվ (2010)12 հանձնարարականի 54-րդ կետի համաձայն. «(…) Հատուկ իրավական նորմեր պետք է ներդրվեն՝ որպես ուղղակիորեն դատավորներին ուղղված աշխատավարձի նվազեցումից պաշտպանություն»:

Նման պայմաններում, երբ միջազգային փաստաթղթերում որպես դատավորների անկախության երաշխիք նախատեսված է աշխատավարձի և դրա նկատմամբ հաշվարկվող հավելավճարի նվազեցումը կանխարգելող նորմ ազգային օրենսդրությունում ներդնելու պահանջ, հետևաբար ՀՀ օրենսդրությունում առկա այդ չափանիշին համապատասխանող նորմն ուժը կորցրված ճանաչելը ուղղակիորեն կհակասի վերը նշված պահանջին: Վերջին դիրքորոշման համար հիմք է ընդունվում նաև այն, որ չի նախատեսվում որևէ այլ իրավական ակտով համարժեք նորմ-երաշխիքի սահմանում:

Ավելին՝ նախագծի հիմնավորումների ուսումնասիրությունից հետևում է, որ դրանք վերաբերում են միայն դատավորների աշխատավարձի սահմանման կարգին, իսկ վերը քննարկվող նորմն ուժը կորցրած ճանաչելու մասին որևէ հիմնավորում չի պարունակվում:

Նշվածի հիման վրա առաջարկում ենք.

Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից հանել ՀՀ դատական օրենսգրքի 75-րդ հոդվածի 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ կարգավորումը:

Հրաչիկ Սարգսյան

Դավիթ Ավետիսյան

Տիգրան Սահակյան

Արսեն Մկրտչյան

Հովսեփ Բեդևյան

Ելենա Սողոմոնյան

Գոռ Հակոբյան

Կարինե Ղազարյան

Սուրեն Մնոյան

Էդվարդ Մանուկյան

Վարդան Ստեփանյան

Գագիկ Հովհաննիսյան

Ռուզաննա Հակոբյան

Մարգարիտա Հարթենյան

Գարիկ Ավագյան